

ԿՐԹՆԱԿԱՆ

ԵՐԶԱՆԻԿ ԿԵԱՆՔԸ

«Օրենքը պահողը երջանիկ կ'ըլլայ»

Առակ. ԻԹ. 18

Տիեզերքը, որուն մէջ կ'ապրինք՝ անշեղի՛ր օրէնքներով կը կառավարուի: Նայի՛՛ր՝ զէպի՛ վեր, երկնակամարին վրայ բոլոր մարմինները, արեգակը, լուսինը, աստղերն ու մոլորակները ձգողական որոշ օրէնքներով կը կառավարուին: Նայի՛՛ր՝ զէպի՛ վար, ծովու յատակին մէջ, կեանքը մասնաւոր օրէնքներու ենթակայ է: Գիշե՛ վայրկեան մը բովանդակ տիեզերքը, ամէն տեղ մաթեմատիքական հաշիւներու կը հանդիպիս, ամէն քայլափոխից կարգ ու կանոն կը տեսնես, ամէն տեղ կարգապահութիւն, միութիւն և որոշ իտէալ մը քեզ կը զիմաւորեն: Տիեզերքը իրեն այս ներդաշնակութիւնը կը պարտի զինքը շրջապատող օրէնքներու անթերի գործադրութեան:

Այս օրէնքները ուրիշ բան չեն բայց եթէ Աստուծոյ կեանքին ունակութիւնները: Աստուծոյ կեանքը այս օրէնքներով շրջապատուած է: Աստուած իր կեանքէն բղթիսած իրեն սոյն օրէնքները յարգելով է որ երջանիկ է: Անկառ ոչ միայն երջանիկ է՝ այլ նաև երջանկութեան միակ աղբիւրը տիեզերքին մէջ:

Մարդ՝ բնութեան իբրև մէկ մասնիկ, և տիեզերքին փոքր մէկ մասը, ինք ևս սոյն օրէնքներուն հնազանդելով է որ կըրնայ ապահովել իր երջանկութիւնը այս աշխարհի վրայ:

Ուստի, երջանիկ ըլլալու համար տիեզերքը կառավարող սկզբունքներուն, Ֆիզիքական ու բարոյական օրէնքներուն համակերպիլ պէտք է: Բնութեան հետ հաշտ ապրիլ էական պայման է: Այն որ անընդունակ է իր ապրած միջավայրի պայմաններուն յարմարելու՝ չի կրնար ձեռք բերել այս երջանկութիւնը: Ասկէ երեք հազար տարիներ առաջ հրեայ մեծ բանաստեղծին

բառերը գործածելով. «Օրէնքը պահողն է որ երջանիկ կ'ըլլայ»:

Ա. — Ի՞նչ է երջանկութիւնը: Երջանկութիւնը տեսակ մը անդորր ու խաղաղ վիճակ մըն է՝ զոր մարդ չի կրնար լման բացատրել, բայց կը զգայ իր մէջը: Ըստ Սոկրատի, «Երջանկութիւնը ներքին հաճոյք մըն է որ գերծ է զզջումէն»: Հաճոյքներ կան որոնք իրենց ետեւէն զըջում ու ցաւ յառաջ կը բերեն: Երջանկութիւնը սակայն գերծ է որեւէ տեսակ ցաւէ և կամ զզջումէ: Անկառ ներքին խաղաղ կեանք մըն է առանց մատաանջութեան:

Յոյները հին ատեն կ'ըսէին, «Երջանկութիւնը աստուածներու պարգևն է»: Յետոյ ըսին, «Երջանկութիւնը առաքինութեան պտուղն է», իսկ աւելի վերջը ըսին, «Բնութեան հետեւէն», այսինքն բնութեան հետ հաշտ ապրէ, բնութեան օրէնքները մի կոտրեր: Ըստ ուրիշ Յոյն խորհողներու, «Երջանկութիւնը կը նշանակէ նպատակի հաւաքատութիւն, սրտի անկեղծութիւն և մտքի անկաշկանդ խաղաղութիւն»:

Երջանկութիւնը կրնայ երկու մասի բաժնուիլ, արտաքին և ներքին: Մարդ արտաքինապէս երջանիկ է երբ քաղաքականապէս ապահով պայմաններու մէջ կ'ապրի, առողջ, հարուստ, ընտանեկան հոգերէ ազատ, ապրուստ ճարելու մատաանջութենէ գերծ, ամէն ձեռնարկի մէջ յաջող, և կեանքի արդար հաճոյքները վայելող մէկն է: Աշխարհ բախտաւոր կը համարէ այս տեսակ մէկը:

Հին ատեն Իսրայէլի Ժողովուրդը երջանկութիւն ըսելով այս բաները կը հասկընար, և Եհովային հնազանդելու կը ջանար որպէս զի նա բախտակից ըներ զինքը ասանկ յաջողութեան և բարօրութեան: Այս տեսակ յաջողութիւնը արտաքին պայմաններու հետ կապակցուած է:

Կայ սակայն ուրիշ երջանկութիւն մը ևս որ ներքին է, և խաղաղ ու անդորր վիճակի մը արդիւնք: Այս տեսակ երջանկութիւնը ենթակային հոգեբանական ներքին ըմբռնումներէն ու վիճակէն կախեալ է: Հոգ չէ թէ անկառ աղքատ է ու հիւանդ, տնտեսական ու քաղաքական աննպաստ պայմաններու մէջ կ'ապրի, կրկին երջանիկ է ու բարեբաստիկ: Ասկառ նոր

Ուխտին սորվեցուցած երջանկութեան աւանդարարձը ձեռն է։ Ուրիշ խօսքով, այս ներքին երջանկութիւնը քրիստոնէութեան պտուղն է, և հոգեւոր բարձրագոյն կեանքի արգասիքը։ Այն որ զարգացած է հոգեւոր կեանքի մէջ, զիւրաւ կը հասկնայ երջանկութեան սոյն ներքին իմաստը։ Աւերազան Մատեանը կ'ըսէ. «Երանի այն ժողովուրդին, որուն Աստուածը եհովա է» (Սաղ. ԺԽԴ. 15)։

Օր մը երկու նկարիչներէ խնդրուեցաւ որ ներքին խաղաղ կեանքը նկարագրելու համար պատկերներ զծեն։ Մէկը նկարեց հանդարտ ու խաղաղ լիճ մը, իսկ միւսը ալեկոծեալ ծով մը, որուն մէջ դուրս ցցուած ժայռի մը վրայ ծառ մը կար, ուր թռչուն մը ուրախ զուարթ կ'երգէր, ապաստանած ծառի ճիւղին վրայ։ Այս երկու պատկերներէն վերջինը աւելի գնահատութեան արժանացաւ։ Ըստ Թօլօթսընի, «Երջանիկ ըլլալ չի նշանակեր ֆիզիքական ախտերէ ու ցաւերէ զերծ ըլլալ, այլ հոգեկան վիշտերէ ու յուզումներէ ազատ ապրիլ, ոչ թէ զգայական հաճոյք վայելի՝ հազա խղճմտանքի խաղաղութիւն և մտքի անդորրութիւն ունենալ»։

Յիսուս արտաքին յաջողութիւններէ զուրկ աղքատ մէկն էր, սակայն երջանիկ էր։ «Աղուէսները ունէին իրենց որջերը, բայց Որդին Մարդոյ իր գլուխը դնելու տեղ իսկ չունէր»։ Յիսուս ընկերական բարձր զիրք չունէր, զօլէճներէ վկայական և կամ համալսարաններէ տիտղոսներ ստացած չէր, և ոչ ալ Պաղեստինի հրեայ ժողովուրդին մէջ քահանայապետի և կամ պարզ քահանայի աստիճան ունէր իր վրայ, բայց զպիրներէ և քահանայապետներէ շատ աւելի երջանիկ էր։ Քանզի անոր երջանկութիւնը ներքին էր և Աստուծոյ հետ ունեցած յարաբերութենէ կը բխէր։

Սուրբն Պողոս կ'ըսէ, «Թեեւ բան մը չունեցողներու պէս եմք, բայց եւ այնպէս ամեն բանի տիրացած եմք» (Բ. Կորն. 2. 10)։ Այս ի՞նչ տարօրինակ վկայութիւն է, և ի՞նչ արտակարգ արտայայտութիւն. բան մը չունենալ, սակայն ամէն բան ունեցողի պէս ճիս ու երջանիկ կեանք ապրիլ։ Ահաւասիկ այս է քրիստոնէութեան մեզի սորվեցուցած երջանկութեան ներքին ու խորունկ իմաստը։

Բ. — Ի՞նչ է երջանկութեան արքեւութիւնը աշխարհիկ հանոյճներէ եւ արտաքին արժեքներէ։ Հաճոյքը արտաքին ազդեցութիւններու հետ կապ ունեցող զգացում մըն է. իսկ երջանկութիւնը մարդուն էութեան հետ կապակցուած հոգեկան ներքին վիճակ մը։ Առաջինը ժամանակաւոր է, բայց վերջինը մնայուն ու տեւական։

Ծարաւի մարդ մը երբ զաւաթ մը ջուր խմէ՝ իսկոյն կը կազդուրուի և կը սկսի լաւ զգալ, սակայն քիչ յետոյ կ'անհետանայ այդ զգացումը։ Նոյնպէս երբ մէկը զմայլելի երաժշտութիւն մը լսէ, գեղեցիկ տեսարաններ զիտէ, տպաւորիչ ատենախօսութիւն մը ունկնդրէ, ինքնաբերաբար կը սկսի հրճուիլ, բայց այս զգայական հրճուանքը զուրկ է մնայուն հանգամանքէ։ Երջանկութիւնը ասկէ բոլորովին տարբեր, ներքին խաղաղ տրամադրութիւն մըն է, որ ի յայտ կուգայ ամէն պարագայի ներքեւ և ամէն տեղ։

Եպիկուրեաններ հին ատեն Յունաստանի մէջ կ'ըսէին, «Ուտենք և խմենք, քանզի վաղը պիտի մեռնինք»։ Կեանքի նպատակը սխալ ըմբռնելու արդիւնքն էր այս տեսակ մտածելակերպը։ Հաճոյքը, զրամը, փառքն ու պատիւը և աշխարհիկ ամէն տեսակ վայելքներն ու պերճանքը թէև ժամանակի մը համար անհատը կրնան գոհացնել, լաւ ևս է ըսել, զբաղեցնել, բայց վերջ ի վերջոյ յուսալքումի կ'առաջնորդեն։

Աղքատ մարդ մը կը խորհի թէ օրին մէկը եթէ բախտը իրեն ժպտելով հարստանայ երջանիկ մէկը կը դառնայ, բայց կը սխալի։ Հարստութիւնը կրնայ անհատը երջանկութեան առաջնորդել, սակայն չի կըրնար երջանկութեան պատճառը համարուիլ։ Եթէ այդպէս ըլլար աղքատ մարդիկ ապերջանիկ պէտք է համարուէին, մինչդեռ իրականութեան մէջ քիչ չեն չքաւոր մարդիկ որոնք աւելի երջանիկ են քան շատ մը մեծահարուստներ։

Կրեսոս հին ատեն այնքան հարուստ մէկն էր որ իր անունը հարստութեան հոմանիշ կը համարուէր։ Եւ այսքան մեծ հարուստ ըլլալուն համար կը խորհէր թէ աշխարհի մէջ ինքն էր միայն ամենաերջանիկ մարդը։ Սողոն՝ որ Յունաստանի եօթը իմաստուններէն մին կը համարուէր և մեծ

քաղաքագէտ մը նաեւ, որ մը իրեն այցելութեան եկած էր. կրեսոս ցոյց տուաւ անոր իր բոլոր հարստութիւնը, և հարցուց թէ իրմէ զատ կա՞յ աշխարհի մէջ մէկը որ ամենաերջանիկ մարդը կրնայ նկատուիլ: Սողոն ըսաւ, այո՛, կայ, և խելոյն թելուսին անունը յիշեց: Թելուս թէև աղքատ, բայց պարկեշտութեամբ ապրած ու իր հայրենիքին ծառայութիւն ըրած էր: Կրեսոս յուսախար եղաւ, քանզի կը խորհէր թէ Սողոն զինքը ամենաերջանիկ մէկը պիտի համարէր:

Կրեսոս դարձեալ հարցուց, Թելուսէն վերջը ուրիշ մէկը կա՞յ որ ամենաերջանիկ կրնայ նկատուիլ այս աշխարհի մէջ: Սողոն ըսաւ, այո՛, այս անգամ ալ Քլէոպիսի և Պիթոյի անունները յիշեց: Ասոնք Յունաստանի մէջ երկու եղբայրներ էին. որ մը երբ իրենց մայրը Տաճար երթալու համար ուշացած էր, անոնք՝ անոր եղներով քըշուած սայլին լուծը իրենց ուսերուն վրայ անցուցած, և արագ արագ վազելով, խելոյն հասցուցին զինքը. այնպէս որ նա կրցաւ մասնակցիլ պաշտամունքին: Բայց իրենք այնքան յոգնած էին որ պառկեցան հանգիստ ընելու համար, և ա՛յ չ'արթնցան բնաւ: Յոյն ժողովուրդը, զիրենք իբրեւ հերոս յարգեց, և արձան մը կանգնեց անոնց յիշատակին, և զիրենք ամենաբախտաւոր ու երջանիկ անհատները համարեց:

Շատ յուսահատեցաւ Կրեսոս և չհասկըցաւ այս խօսքերուն իմաստը, սակայն երբ գերի ինկաւ Պարսից Կիւրոս թագաւորին ձեռքը և Կիւրոս զինքը խարոյկի մը վրայ դրաւ այրելու համար, այն ատեն հասկցաւ թէ հարստութիւնը զինքը երջանիկ չէ ըրած: Եւ Կրեսոս խարոյկին վրայէն, «Սողոն, Սողոն, Սողոն», ըսելով երեք անգամ կանչեց: Կիւրոս հարցուց թէ ի՞նչ է անոր նշանակութիւնը: Կրեսոս ըսաւ. — Սողոն ըսած էր իրեն թէ «Ամեն բանին վախճանն է ուր զովի է»: Երջանկութիւնը ո՛չ թէ հարստութիւն ունենալու, այլ ծառայելու մէջ կը կայանայ: Կիւրոս խղճալով Կրեսոսի այս գծաբառ վիճակին վրայ, իրեն կարեկցութիւն ցոյց տուաւ, բարեկամացաւ և զայն մահէն ազատեց:

Անուս երկտասարդ մը, երբ դպրոց յաճախելու սկսի, կը խորհի թէ օրին մէկը եթէ համալսարանէ տնտեսութեան մը անէ երջանիկ

մէկը կ'ըլլայ աշխարհի մէջ, բայց կը սխալի չարաչար: Դաստիարակութիւնը անհատը կրնայ երջանկութեան առաջնորդել՝ սակայն չի կրնար երջանկութեան միակ աղբակը համարուիլ: Պարզ գործաւոր մը կը խորհի թէ օրին մէկը եթէ ընկերական բարձր դիրքի մը արժանանայ երջանիկ կը դառնայ, Բայց այս ալ կը սխալի նոյնպէս: Քանզի ընկերական դիրքը թէև կրնայ անհատը երջանկութեան առաջնորդել, սակայն չի կրնար երջանկութեան միակ զրգապատճառը հանդիսանալ:

Նախօրէն Պոնափարթ իր փառքի զազախակէտին հասած էր, երբ իրեն հարցուցին թէ երջանիկ ես: Ասոր ի պատասխան ըսաւ. «Երբ երկտասարդ էի ու պարզ զինուոր մը՝ երջանիկ էի, բայց երբ աւելի բարձր դիրքերու տիրացայ, հարստութիւնս շատցաւ, փառքս պատիւս աւելցան, նոյն համեմատութեամբ հոգերս ու մտատանջութիւններս բազմապատկուեցան և երջանկութիւնս պակսեցաւ»:

Սողոմոն հրէից մէջ ուսում ունէր, ընկերական բարձր դիրք ունէր, հարստութիւն ունէր և կեանքի ամէն տեսակ հաճոյքները վայելելէ վերջ ըսաւ. «Աւելցնուիլն ունայնութեանց. ամենայն ինչ ընդունայն է»: Մեծն Աղեքսանդր կարճ ժամանակի մէջ երբ ծանօթ աշխարհը գրաւեց որ մը մանուկի պէս սկսաւ լալ և գանգատիլ թէ աստուածներ այս աշխարհը փոքրիկ ստեղծած են, այլևս տեղ մնացած չէր որ գրաւեր և իր փառասիրութեան զոհացում տար: Վստահ կրնաք ըլլալ որ եթէ աշխարհը կրկնապատիկ տարածութիւն ունենար, կրկին դժգոհ պիտի մնար և ինք զինքը դարձեալ ապերջանիկ պիտի համարեր: Որովհետեւ եթէ մէկը ներքին երջանկութեան տիրացած չէ, աշխարհի փառքը, պատիւը, ընկերական դիրքը, պերճանքը չեն կրնար զինքը երջանիկ ընել: Մարդկային կեանքի դարաւոր փորձառութիւնը վկայած է այս ճշմարտութեան միշտ:

Գ. — Այս իրական երջանկութիւնը ի՞նչպէս ձեռք կը բերուի: Նախ՝ կեանքը չի տակ հայեցակէտէն դիտելով: Արտաքին լաւագոյն պայմաններ անհատը յաջողութիւններու կրնան առաջնորդել, և զայն գէթ առժամապէս զուարթ տրամադրութիւններու մէջ պահել, սակայն երբ մէկը

յոռետես է և կեանքը սխալ հայեցակէտով և կամ մտայն ակնոցով կը դիտէ, դժգոհութիւնը իրեն մնայուն յատկանիշը կը դառնայ միշտ: Հետեաբար, յոռետեսի մը համար դժուար է ձեռք բերել այս երջանկութիւնը:

Յոռետեսութիւնը արդիւնք է մասամբ ժառանգական միտումներու, մասամբ առողջութեան խանգարման, մասամբ յոռի գաստիարակութեան և մասամբ աննպաստ միջավայրի: Ահաւասիկ այս պայմաններու ներքեւ, յոռետեսը չի կրնար ինքնիրեն օգնել, և ուստի կը փորձուի ամէն ինչ մուծ տեսնել:

Յոռետեսի և լաւատեսի գաղափարներուն միջև տեղի ունեցած տարբերութիւնը ուրիշ բան չէ բայց եթէ իրերը տարբեր հայեցակէտէ դիտելու ունակութիւնը: Զոր օրինակ, յոռետեսը վարդի թուփին վրայ կը նայի և հոն իր աչքը միայն փուշերու կը հանդիպի, մինչդեռ լաւատեսը հոն բուրբուռեւէտ ու գեղեցիկ վարդը կը տեսնէ: Յոռետեսը մեղուի վրայ կը նայի և կը մտանշէ իսկոյն անոր խալթիլ ասեղը, իսկ լաւատեսը կը դիտէ անոր քաղցրահամ մեղրը: Յոռետեսը օրուան վրայ կը նայի և կը տեսնէ հոն միայն գիշերուան մթութիւնը, իսկ լաւատեսը՝ կէսօրուան արեւու կենսատու ճառագայթները: Յոռետեսը գոյներուն վրայ ակնարկ մը կը նետէ և հոն աչքին կը դարնէ միայն սև գոյնը, բայց լաւատեսը կը դիտէ հոն ճերմակը: Ծօրէնհաւըր և Հարթմէն յոռետես, իսկ Տէքարթ, Լայպնից և Սթինոգա իբրեւ լաւատես փիլիսոփաներ, գաղափարի այս երկու հակամարտ հոսանքներու մեծ ռահվիրաները կը հանդիսանան:

Իրերուն յոռի կողմերը չանտեսելով հանդերձ անոնց միշտ լաւ կողմերը դիտել և զմեզ մեր ապրած միջավայրի պայմաններուն յարմարցնել, ինչպէս նաև կեանքը զոհողնակ սրտով ապրիլ աւելի դիւրաւ կ'առաջնորդէ մեզ երջանկութեան քան թէ յոռետես գաղափարներուն հետեւիլ:

Երկրորդ՝ այս երջանկութիւնը կրնանք ձեռք բերել անհաւատութիւնը մեր վրայէն ի բաց թօթափելով: Անհաւատը զուրկ է գաղափարական բարձր կեանքի վերացումներէ, և չունի կեանքի համար բարձր իտէալ ու հոգեւոր իրականութիւններու հանդէպ պայծառ տեսիլ: Այն որ զուրկ է

ասոնցմէ, չի կրնար իրերուն վրայ վերէն նայիլ, չի կրնար նիւթէն վեր բարձրանալ, չի կրնար նիւթական աշխարհէն վեր հոգեւոր մթնոլորտի մը մէջ ապրիլ, և հետեաբար չի կրնար ներքին երջանկութեան գաղտնիքին թափանցել: Կրնայ արտաքին յաջողութիւններ ձեռք բերել, բայց չի կրնար ներքին երջանկութեան տիրանալ:

Հաւատքը կը փոխէ մեր ապրելակերպը և մեզի կուտայ բարձր տեսիլ հոգեւոր իրականութիւններու հանդէպ: Մարդ մը այն է ինչ որ իր գաղափարականն է: Մէկը որ վարժուած է իրերուն վրայ հաւատքի աչքով նայիլ, այս աշխարհի անցաւոր բաներուն համար չի մտատանջուիր: Իր հաճոյքն ու ներքին զոհողնակութիւնը կը փնտռէ իմացական ու հոգեւոր ոլորտներու մէջ: Արժիւր երբ վերէն կը թռի, վարի խորտ ու բորտութիւնները չի տեսներ. այնքան լայն հորիզոնի մը առջև կը կենայ որ չի հետաքրքրուիր վարի մանր մունր բաներով: Քրիստոնեայ հաւատացեալն ալ երբ հաւատքի աչքերով իրերը դիտէ ու վերանայ դէպի հոգեւոր կեանքի բարձր ոլորտները՝ այլևս սրտնեղութիւնը իրմէ կը հեռանայ, և կը սկսի վերի բաներով զբաղիլ: Պղատոն կ'ըսէ. «Երջանկութիւնը արդիւնքն է բարձր նկարագրի մը՝ որուն սիւներն են չափաւորութիւն, բարոյական քաջութիւն, խոհեմութիւն և ազնուութիւն»:

Երրորդ՝ երջանկութիւնը ձեռք կը բերուի ծառայութեան կեանքին նուիրուելով: Անշահախնդիր ծառայութիւնը, և մաքուր շարժառիթով ուրիշներու բարեկալութեան ի նպաստ տեղի ունեցած զոհողութիւններ անհատը կը վարձատրեն երջանկութեամբ: Ամերիկացի Հելլեն Քէլըր արտաքին երջանկութիւնէ զուրկ է, բայց ինքզինքը աշխարհի վրայ ամենաերջանիկ անձերէն մին կը նկատէ, հակառակ որ աչքը կոյր է, ականջը խուլ և լեզուն համր: Երջանիկ է անոր համար որ ինքզինքը ծառայութեան կեանքին նուիրած է: Իրերը Աստուծոյ ակնոցով կը դիտէ: Ծառեր կան այսօր որ աչք ունին կը տեսնեն, ականջ ունին կը լսեն, և լեզունին բաց կը խօսին, բայց Հելլեն Քէլըրի մատուցած ծառայութեան մէկ հարիւրերորդը չեն մատուցաներ մարդկութեան: Մարդ մը այն աստիճան երջանիկ է՝ ինչ համեմատութեամբ որ իրմէ նուազ

քախտաւորներու երջանկութեան պատճառ
կը դառնայ:

Չորրորդ՝ երջանկութեան կրնանք տի-
րանալ Աստուծոյ օրէնքը պահելով և Անոր
հետ միանալով: Եթէ կ'ուզես երջանիկ ըլ-
լալ, սերտէ՛ Աստուծոյ օրէնքը, ֆիզիքա-
կան աշխարհը օրէնքներ ունի, պահէ՛ զա-
նոնք: Ընկերական, քաղաքական ու տն-
տեսական կեանքը օրէնքներով կը կառա-
վարուի, յարգէ՛ զանոնք: Հոգեւոր կեանքը
նոյնպէս իրեն յատուկ օրէնքներն ունի,
հետեւէ՛ անոնց: Մէկ խօսքով, Աստուծոյ
այս լայնատարած տիեզերքը օրէնքներով
չըջապատուած է. մի՛ անարգեր այդ օրէնք-
ները, մի՛ կոտորեր զանոնք, մի՛ հակառակի
անոնց, այլ յարմարցո՛ւր ինքզինքդ այդ
օրէնքներուն, հաշտուէ՛ անոնց հետ և ներ-
դաշնակ ապրէ՛ այդ օրէնքներով: Սենեկա
կ'ըսէ. «Երջանիկ է այն, որուն կեանքը
ներդաշնակ կ'ընթանայ զինքը կառավարող
ընտելեան օրէնքներուն հետ»: Աստուծոյ
խօսքը կ'ըսէ. «Իմ ճամբաներս պահողները
երջանիկ կ'ըլլան» (Առակ. Ը. 32):

Միւս կողմէն, պէտք չէ մոռնալ թէ
երջանիկ ըլլալու համար պայման է նաև
միանալ Աստուծոյ հետ, ինչպէս Փասքալ
կը մատնանշէ. «Երջանկութիւնը Աստուծոյ
հետ միացում է»: Այս միացումը արդիւնքն
է օրինապահութեան: Այն որ Աստուծոյ օ-
րէնքները կը յարգէ, համընթաց քալուածք
մը կ'ունենայ Անոր հետ: Աստուծոյ հետ
միասին քալել կը նշանակէ Աստուծոյ ընտե-
լեան հաղորդակից ըլլալ, Անոր հետ միա-
նալ, միասին ապրիլ և միասին գործել
երկնից թագաւորութեան սուրբ գործին
մէջ, իբրև Անոր գործակատարները երկրի
վրայ: Աստուած ամենամեծ աղբիւրն է
երջանկութեան: Այն որ զԱստուած կը
գտնէ, ինքն ալ կ'երջանկանայ: Քանզի
զԱստուած գտնելով կ'ազատագրուի նախ
իր մեղքերէն, ապա Անոր հետ կենդանի
հաղորդակցութեան մէջ մնալով կը սրբանայ
օր ըստ օրէ և կը վերանայ այս աշխարհէն
դէպի վեր, աստուածային երջանկութեան
բարձրագոյն ոլորտները և որով կը տիրա-
նայ իսկական երջանկութեան:

Առաջին Համաշխարհային Պատերազմի
ընթացքին, մարդ մը կրօնափոխ չըլլալուն
համար բանտարկուեցաւ: Օր մը առտուն
կանուխ զինքը բանտէն դուրս հանեցին և

երեք զինուորներով քաղաքէն դուրս հե-
ռու տեղ մը տարին սպանելու համար:
Հազարապետը հոն մահուան վճիռը երբ
իրեն հաղորդեց, ինքը չտխրեցաւ. ժպտալ
իր գէմքին վրայ էր միշտ, և պատասխա-
նեց հազարապետին այսպէս. «Ես անմեղ
եմ, եթէ քրիստոնէութիւնը չուրանալուս
համար զիս յանցաւոր կը նկատէք, հոգ չեմ
ընել, մահէն չեմ վախնար, աւելի նախա-
մեծար կը համարեմ մեռնիլ՝ քան թէ
կրօնքս ուրանալ»: Հազարապետը զարմա-
ցաւ այս պատասխանին վրայ և ըսաւ.
«Ի՞նչն մեղի պէս մահկանացու մարդ չեմ,
ինչո՞ւ մահէն չես սոսկար»: Նախախնամու-
թիւնը ապա զայն հրաշքով մահէն ազա-
տեց. բայց այս բոլոր հալածանքներու
չըջանին, անոր ներքին անդորրութիւնը չի
վրդովեցաւ:

Առաջին դարու մէջ, քրիստոնէական
խումբ խումբ մահուան կը դատապար-
տուէին, և այլևայլ չարչարանքներով կը
սպանուէին, սակայն հոգ չէին ընել: Քան
զի ներքին երջանկութեան տիրացած էին:
Երբ մարդ ներքնապէս երջանիկ է և Աս-
տուծոյ հետ կ'ապրի, մահն իսկ իր առջև
կը պարտուի:

Այս օրինակները բաւական են ցոյց
տալու թէ կեանքի ամենէն գոյնաւ պայ-
մաններուն մէջ իսկ կարելի է անդորր ու
խաղաղ կեանք մը ապրիլ, եթէ մարդ լիռ-
վին տիրացած է ներքին երջանկութեան՝
որ Աստուծոյ պարգևն է քրիստոնէայ հա-
ւատացեալին համար: Եթէ մէկը տիրանայ
այս ներքին, հոգեկան երջանկութեան, ոչ
ոք կրնայ զայն իրմէ յափշտակել, ո՛չ ազ-
քատութիւնը, ո՛չ հիւանդութիւնը, ո՛չ
արկածը, ո՛չ հալածանքը, ո՛չ սուրը, ո՛չ
բանտը, ո՛չ մահը, և ո՛չ ալ երկնքի ու
երկրի վրայ որեւէ արարած: Անիկա իրեն
ժառանգն է ու յաւիտենական գանձը: Այս
գանձը չահելու համար է որ մենք ստեղ-
ծուած ու աշխարհ եկած ենք:

ԳՐ. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ

Յոէզեօ, Գալիլէ.